ՄԱՐԻՆԵ ՍԱՀՐԱԴՅԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (1918-1921 ԹԹ.)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.155

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը ներկայացնում է Թիֆլիսի հայ համայնքի ներգրավվածությունը Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության (1918-1921թթ.) քաղաքական կյանքում և այդ ազդեցության նվազման պատճառները:

Չնայած ժողովրդավարական կարգերի հաստատմանը և ազգային փոքրամասնությունների իրավական հավասարության ապահովման մասին հայտարարությանը, որն արտացոլված էր նաև Վրաստանի անկախության հռչակագրում, հայ համայնքի քաղաքական դերի նվազումը պայմանավորված էր ինչպես պետական քաղաքականությամբ, այնպես էլ ներքին ու տարածաշրջանային գործոններով: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վրացական իշխանությունների որդեգրած ազգային քաղաքականությունն ու օրենսդրական կարգավորումները խոչընդոտում էին հայերի մասնակցությունը պետական կառավարման համակարգին: Մասնավորապես, քաղաքացիական և լեզվական սահմանափակումները նվազեցնում էին հայ համայնքի քաղաքական ազդեցությունը: Նորաստեղծ պետության ազգային ռազմավարությունը նպատակ ուներ կրճատելու ոչ վրացական համայնքների ներգրավվածությունը պետական և տեղական կառույցներում:

Թիֆլիսի քաղաքային խորհրդի ընտրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև հայերը մինչ այդ զգալի դերակատարություն ունեին քաղաքային ինքնակառավարման գործընթացներում, նորաստեղծ պետության առաջնահերթությունները հանգեցրին նրանց ազդեցության կրճատմանը:

Ուսումնասիրությունը հիմնվում է օրենսդրական փաստաթղթերի, ժամանակի մամուլի և որոշ արխիվային նյութերի վերլուծության վրա՝ վեր հանելու համար, թե ինչպես ձևավորվեց և գործեց վրացական ազգային քաղաքականությունը: Այն ընդգծում է նաև Թիֆլիսի հայ համայնքի փորձերը՝ հաղթահարելու քաղաքական ակտիվության սահմանափակումները, սակայն ներքին կազմակերպչական խնդիրները և արտաքին քաղաքական զարգացումները խոչընդոտեցին նրանց մասնակցությանը Թիֆլիսի քաղաքական կյանքին:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ հայկական համայնքի քաղաքական ակտիվության անկումը կապված էր Վրաստանի քաղաքական վերնախավի ներսում առկա ազգայնական մոտեցումների հետ, որոնք ազդում էին քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա և սահմանափակում հայ համայնքի ներգրավվածությունը պետական քաղաքական գործընթացներում: Բացի այդ, հայ համայնքում առկա ներքին խնդիրները ևս նպաստեցին նրանց ազդեցության նվազմանը:

Բանալի բառեր և արտահայտություններ. *տեղական ինքնակառավարման մարմիններ, Թիֆլիսի հայ համայնք, Թիֆլիսի քաղաքային խորհուրդ, Խորհրդի ընտրություններ, հայերի իրավունքների սահմանափակում:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1918 թ. մայիսի 26-ին Վրաստանի անկախության հռչակումից հետո Թիֆլիսի հայ համայնքի քաղաքական ներգրավվածությունը զգալի փոփոխությունների ենթարկվեց: Մինչ այդ հայերը կարևոր դեր էին խաղում քաղաքի հասարակական և քաղաքական կյանքում, սակայն անկախությունից հետո վրացական իշխանությունների որդեգրած ազգային քաղաքականությունը սահմանափակեց նրանց ազդեցությունը: Թիֆլիսը՝ որպես բազմազգ քաղաք և քաղաքական գործընթացների կենտրոն, նախկինում հայերի ակտիվ մասնակցության վայրն էր, բայց անկախությունից հետո նրանց դերը նվազեց:

Սույն հետազոտության հիմնական նպատակն է վերլուծել Վրաստանի անկախության և պետական քաղաքականության ազդեցությունը Թիֆլիսի հայ համայնքի քաղաքական ներգրավվածության վրա: Այն ընդգրկում է հայերի ազդեցության նվազմանը նպաստած իրավական, սոցիալական և քաղաքական գործոնների ուսումնասիրությունը:

Հետազոտության հիմնական խնդիրներն են՝

- **Վրացական ազգային քաղաքականության վերլուծություն**. ուսումնասիրել վրացական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը, որն ուղղված էր վրացական ազգային ինքնության ամրապնդմանը՝ սահմանափակելով ոչ վրացական համայնքների մասնակցությունը պետական կառավարման գործընթացներին:
- **Իրավական և օրենսդրական փոփոխությունների ազդեցության գնահատում**. վերլուծել այն օրենքներն ու կարգավորումները, որոնք ուղղակի կամ անուղղակի սահմանափակել են հայ համայնքի քաղաքացիական և քաղաքական իրավունքները (օրինակ՝ լեզվական քաղաքականություն, քաղաքացիության և ընտրական իրավունքների խնդիրներ):
- **Քաղաքական ակտիվության նվազում**. ուսումնասիրել Թիֆլիսի հասարակական և տնտեսական պայմանները, բազմազգ բնակչության կառուցվածքը, ինչպես նաև այն միջոցառումները, որոնք խոչընդոտել են հայերի մասնակցությանը տեղական ինքնակառավարման գործընթացներին:

Հետազոտության գիտական կարևորությունն այն է, որ բացահայտվում են Վրաստանի ազգային և պետական քաղաքականության ձևավորման վրա ազդած պատմական գործոնները՝ հատուկ ուշադրություն դարձնելով Թիֆլիսի հայ համայնքի քաղաքական իրավունքների սահմանափակումներին: Ուսումնասիրությունն ապահովում է ավելի լայն պատկերացում այն մասին, թե

ինչպես կարող է ազգային քաղաքականությունը ազդել բազմազգ հասարակությունների համերաշխության և համագործակցության վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի լուծման համար ուսումնասիրվել են պատմական գործընթացներ, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանի իրավական և սոցիալ-քաղաքական հարաբերությունների ազդեցությունը ազգային փոքրամասնությունների շրջանում: Ուսումնասիրությունը իրականացվել է տարբեր մեթոդների համադրմամբ, ինչը ապահովում է վերլուծության ամբողջականությունն ու խորությունը: Հետազոտության մեթոդաբանությունը ներառում է պատմաքաղաքական վերլուծության և համեմատական մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վրաստանի անկախության ազդեցությունը հայերի քաղաքական ներգրավվածության վրա

Վրաստանի 1918թ. անկախությունը զգալիորեն փոխեց քաղաքական իրավիճակը, հատկապես Թիֆլիսում, որտեղ հայերը կազմում էին քաղաքի բնակչության մեծամասնությունը: Անկախությունից առաջ հայերն ակտիվորեն մասնակցում էին քաղաքի հասարակական և քաղաքական կյանքին՝ ունենալով էական ազդեցություն տեղական իշխանության վրա: Սակայն Վրաստանի անկախությունից հետո նոր իշխանությունները, որդեգրելով ազգայնական ռազմավարություն, սկսեցին կիրառել քաղաքական միջոցառումներ, որոնք սահմանափակում էին ոչ վրացի համայնքների, հատկապես հայերի ներգրավվածությունը: Նոր քաղաքականության հիմնական նպատակներից էր նվազեցնել ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի, մասնակցությունը պետական կառավարման մարմիններում:

Թիֆլիսը մեծ մասամբ բնակեցված էր հայերով. քաղաքի ընդհանուր բնակչության շուրջ 43.1 տոկոսը (149,294 մարդ) հայեր էին: Մնացած բնակչությունն ուներ հետևյալ կազմը՝ 26.2 տոկոս (91,997) ռուսներ, 10.7 տոկոս (37,584) վրացիներ և 20 տոկոս (67,892) այլ ազգեր: Ընդհանուր առմամբ,

Թիֆլիսի բնակչությունը կազմում էր 346,767 մարդ (**«Հորիզոն» 1917, 27 հուլիս**): Բացի այդ, ողջ Վրաստանի տարածքում ազգային փոքրամասնության կարգավիճակում բնակվում էր շուրջ 400 հազար հայ (**«Հորիզոն» 1917, 27 հուլիս**): Այսպիսով, պարզ է դառնում, թե ինչպիսին կարող էր լինել հայերի դերակատարությունը Թիֆլիսի քաղաքական կյանքում, եթե վրացական կառավարությունը չձեռնարկեր քայլեր հայկական ազդեցությունը թուլացնելու ուղղությամբ:

Վրաստանն իր անկախության առաջին իսկ օրից մեծ ուշադրություն դարձրեց թե՛ քաղաքային, թե՛ զեմստվային ինքնավարությունների զարգացմանն ու կազմակերպմանը: 1918թ. հունվարի 25-ին ընդունվեց որոշում զեմստվոների վերաբերյալ, իսկ 1919թ. հունվարի 28-ին նրանց հանձնվեց տեղական վարչակազմի և միլիցիայի կազմավորման գործը: Հունվարի 30-ին վերացվեց նաև նահանգային կառավարման համակարգը, և Վրաստանը բաժանվեց գավառական զեմստվոների (**Մաիլյան Բ., 2011**):

Չնայած վարչատարածքային ինքնավարության ենթադրյալ ձևավորմանը՝ ընդունված օրենքները խոչընդոտում էին ազգային ինքնավարությունների հաստատմանը: Տեղական կառավարման մարմինները ենթարկվում էին կենտրոնական իշխանությանը, որն իրավասու էր կասեցնել նրանց որոշումները: Այսպիսով, Վրաստանը ձևավորել էր ինքնավար կառույցների ցանց, սակայն ազգային փոքրամասնությունները դրանցում սահմանափակ ներգրավվածություն ունեին՝ հակառակ սահմանադրական նախագծերով նախատեսվածի: Ընդ որում պետք է նշել, որ Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդը կազմել էր ազգային-մշակութային ինքնավարությանն առնչվող դրույթներ, որոնք պետք է ընդգրկվեին սահմանադրության մեջ (**Ստեփանյան Խ., 2008**):

Պետք է նշել, որ ինքնավար կառույցները ստեղծվում էին քաղաքական լարված պայմաններում. մի կողմից՝ վրաց ղեկավարության ազգայնական քաղաքականությունը, մյուս կողմից՝ բռնաճնշումները, որոնք ազգային

փոքրամասնությունների շրջանում ձևավորում էին հակապետական տրամադրություններ:

Վրաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգը իրավականորեն վերջնականապես պետք է կարգավորվեր 1921 թ. Սահմանադրությամբ:

Անդրադառնալով ինքնակառավարման մարմիններում հայերի մասնակցության շրջանակներին՝ հարկ է ընդգծել այն հիմնական փոփոխությունները, որոնք իրականացրեց վրացական կառավարությունը: Այդ փոփոխությունները, կարծես նպատակ ունեին աստիճանաբար նվազեցնել հայերի ներգրավվածությունը, հատկապես քաղաքական գործընթացներում:

1918 թ. հոկտեմբերի 1-ին Վրաստանի Ազգային Խորհուրդը (ՎԱԽ) վրացերենը ճանաչեց որպես պետական լեզու: Արդեն հուլիսին արձակվեց հրաման, ըստ որի՝ պաշտոններից ազատվում էին ոչ միայն վարչական ծառայության աշխատակիցները, այլ նաև մեծ թվով բժիշկներ և ուսուցիչներ, որոնք աշխատում էին պետական վերահսկողության տակ գտնվող հաստատություններում **(დებულება საქართველოს დემოკრატიულ..., 1919**):

Պետք է նշել, որ սահմանադրական նախագծի մշակվող նորմերից մեկը, անդրադառնալով ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքներին, նախատեսում էր, որ եթե տեղական ինքնակառավարման մարմինների բնակիչների մեծամասնությունը (ավելի քան 50%-ը) ազգությամբ վրացի չէ, ապա պետական լեզվին զուգահեռ տարբեր հաստատություններում գործավարությունը պետք է իրականացվեր նաև տվյալ փոքրամասնության լեզվով **(დებულება საქართველოს დემოკრატიულ..., 1919**): Ըստ էության, սա ենթադրում էր լեզվական խնդիրների լուծում, սակայն գործնականում այդ քաղաքականության հետևանքով հայերը հեռացվում էին կարևոր պետական պաշտոններից:

1918թ. հուլիսի 16-ին ընդունված «Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը զգալի ազդեցություն ունեցավ երկրում ապրող ազգային փոքրամասնությունների վրա: Օրենքի

համաձայն՝ Վրաստանի քաղաքացի կարող էր համարվել յուրաքանչյուր բնակիչ, որը մինչև 1914թ. հուլիսի 19-ը հաշվառված էր երկրի որևէ վարչական միավորման մեջ, իսկ երկքաղաքացիությունը բացառվում էր **(დებულება საქართველოს დემოკრატიულ..., 1919**):

Այս պահանջը դժվարություններ էր ստեղծում Թիֆլիսի հայերի և այլ փոքրամասնությունների համար, քանի որ նրանցից շատերը չունեին պահանջվող բնակության իրավունքը հաստատող փաստաթղթեր, որի հետևանքով քաղաքացիության դիմումները հաճախ մերժվում էին: Չնայած օրենքում բացահայտ ազգային խտրականություն չէր նշվում, գործնականում այն կիրառվում էր հայ համայնքի նկատմամբ քաղաքական անվստահության պայմաններում:

Այս ամենին զուգահեռ երկրում խորանում էր ճգնաժամը: Բնակարանային և սեփականության հարցերը դուրս էին մնում իշխանության վերահսկողությունից:

Արդեն 1918թ. փետրվարի 15-ի նիստում քաղաքագլուխը զեկուցեց հացի սուր ճգնաժամի մասին: «Պայքար» թերթի էջերում հայտարարվեց, որ անգամ ազգաբնակչությանը տրվող 0.5 ֆունտ հացը ժամանակավորապես կրճատվել է **(«Պայքար» 1918, 17 փետրվար):**

Բավական ծանր էր նաև գաղթականության խնդիրը: 1918թ. ապրիլի 5-ին Խորհրդի արտակարգ նիստում իրավասու Խուդադյանը առաջարկեց քննարկել փախստականների հարցը, քանի որ նրանց անհրաժեշտ էր ապահովել կացարանով: Քաղաքագլուխ Էլիավան հայտնեց, որ բացի բնակարաններից, քաղաքը մտադիր է գաղթականների համար վրաններ տեղադրել: Սակայն այս լուծումն առավել վատթար պայմաններ էր ստեղծում նրանց համար:

Այս բոլոր գործընթացները միանշանակ ազդեցություն ունեցան հետագա քաղաքական զարգացումների վրա:

1918թ. մարտի 14-ին «Պայքար» թերթը նշել էր, որ Թիֆլիսի քաղաքային դումայի նիստերը հաճախ չէին կայանում քվորումի բացակայության պատճառով, ինչը համարվել էր դումայի «կյանքի հիվանդություն»:

Սեպտեմբերի 2-ի նիստում քվեարկությամբ վերընտրվել է նախագահության նախկին կազմը. նախագահ՝ Ա. Լոմտատիձե (սոցիալ-դեմոկրատ), առաջին օգնական՝ Ա. Եաղճյան (ՀՅԴ), երկրորդ օգնական՝ Լ. Թումանյան (էսէռ), քարտուղար՝ Վ. Խախանով (**«Մշակ» 1918, 25 սեպտեմբեր):**

Սեպտեմբերի 25-ին վարչությունը զեկուցեց, որ անհրաժեշտ է նախաձեռնել քաղաքային դումայի իրավասուների ընտրությունը, քանի որ նրանց լիազորությունների ժամկետը լրանում էր հունվարի 1-ին («**Մշակ» 1918, 25 սեպտեմբեր**):

Հոկտեմբերի 9-ին ընտրվեց նոր վարչություն, որի միակ հայ անդամը սոցիալ-դեմոկրատ Ս. Փիրումյանն էր: Քաղաքագլուխ ընտրվեց Ն. Էլիավան (**«Ժողովրդի ձայն» 1918, 11 հոկտեմբեր)**:

Խորհրդի վերջին նիստերի օրակարգի հիմնական հարցերն էին սահմանային վեճերը: 1918թ. հոկտեմբերի 30-ին խորհուրդը, լսելով նախագահի զեկուցումը հայկական և վրացական հանրապետությունների զորամասերի միջև ծագած միջադեպի մասին, հայտարարեց, որ կողմ է հայ-վրացական զինված հակամարտության խաղաղ լուծմանը (**«Մշակ» 1918, 30 հոկտեմբեր**):

Դեկտեմբերի 16-ին քաղաքային դուման սահմանային վեճերի ռազմական լուծումը համարեց հանցանք դեմոկրատիայի դեմ **(«Մշակ» 1918, 19 դեկտեմբեր)**: Նույն նիստում, Սանահինի դեպքերի քննարկումից հետո, խորհրդում առաջացան հակադիր խմբեր, և սա Խորհրդի վերջին նիստն էր **(«Մշակ» 1918, 22 դեկտեմբեր)**:

Կարող ենք եզրակացնել, որ Վրաստանի անկախացումից հետո Թիֆլիսի հայ համայնքի քաղաքական ներգրավվածության փոփոխությունները պայմանավորված էին երկրի ազգային և պետական ինքնության ձևավորման գործընթացով: 1918-1920 թթ. ընթացքում ձևավորվող վրացական պետական մարմինները նպատակ ունեին ամրապնդելու վրացական գերիշխանությունը, որի հետևանքով տեղի ունեցավ ոչ վրացական համայնքների, մասնավորապես հայերի, քաղաքական ազդեցության աստիճանական նվազում:

Հայերի մասնակցությունը Թիֆլիսի 1919թ. քաղաքային դումայի ընտրություններին

Վրաստանի 1917-1919թթ. ընտրական գործընթացները կարևոր փուլ էին երկրի սոցիալ-քաղաքական և ազգային պետության ձևավորման համար: Վրացական քաղաքական համակարգը ձևավորվում էր անկախության ձեռքբերումից հետո, երբ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը փորձում էր հաստատել իր լեգիտիմությունը: Սակայն այս գործընթացը ոչ միայն բախվեց ներքին սոցիալ-քաղաքական լարվածությանը, այլև սրվեց ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերի և վրացական իշխանությունների հարաբերությունների համատեքստում:

1918թ. նոյեմբերին խորհրդարանում քննարկվեց քաղաքացիության և ընտրական նոր կանոնակարգի հարցը: Տպագրվող ընտրական ցուցակների լեզվական բազմազանությունը (վրացերեն, հայերեն և ռուսերեն) դարձավ նիստերի ժամանակ բուռն քննարկման առարկա (**სტოვენ ჯ., 2018**):

Այս գործընթացի շրջանակներում 1918 թ. դեկտեմբերի 17-ին հաստատվեց «Քաղաքային խորհուրդների ընտրողների ընտրությունների կանոնակարգը», որը բաղկացած էր 37 հոդվածից: Ըստ կանոնակարգի՝ ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին Վրաստանի՝ 20 տարին լրացած քաղաքացիները՝ անկախ սեռից, ազգությունից կամ կրոնից (**სტოვენ ჯ., 2018**): Սակայն հաստատված կանոնակարգով բնակչության մի մասը զրկվում էր ընտրական իրավունքից ազգային պատկանելության հիմքով, քանի որ քաղաքացիություն ստանալու դիմումները հիմնականում մերժվում էին՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով:

Արդյունքում զգալի թվով մարդիկ չստացան Վրաստանի քաղաքացիություն և հետևաբար զրկվեցին քաղաքական, սոցիալական և տնտեսական մի շարք իրավունքներից: Բացի այդ, ընտրացուցակներում բացահայտվում էին բազմաթիվ խնդիրներ, օրինակ՝ քաղաքացիների տվյալները հաճախ սխալ էին գրանցված կամ ընդհանրապես ընդգրկված չէին (**სტოვენ ჯ., 2018**):

1919թ. հունվարի 15-ին Թիֆլիսի քաղաքային խորհրդի նիստում քննարկվեցին ընտրողների ցուցակագրման և մարդահամարի հարցերը: Ընտրական ցուցակներում ընդգրկված էր 65 հազար ընտրող, մինչդեռ 19 հազար ձայներ դեռևս վիճելի էին: Համեմատության համար՝ 1917թ. ընտրություններին մասնակցել էր 117 հազար ընտրող (**სტოვენ ჯ., 2018**):

Հայկական համայնքի քաղաքական կազմակերպությունները, ներառյալ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը, բողոքեցին ընտրություններում անարդար վերաբերմունքի դեմ: Հատկանշական է, որ հայ պաշտոնյաները հաճախ դուրս էին մնում ընտրական ցուցակներից, ինչը վկայում է ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող քաղաքական ճնշումների մասին:

Ընտրական գործընթացներն այս ժամանակաշրջանում ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման, այլև Վրաստանի քաղաքական ուժերի հարաբերակցության ստուգման միջոց էին: Թիֆլիսի քաղաքային խորհրդի 1919 թ. ընտրություններն արդեն ստացան քաղաքական բնույթ՝ դուրս գալով մունիցիպալ խնդիրների շրջանակից (**სტოვენ ჯ., 2018**): Այսինքն՝ ընտրությունների ելքը դարձավ ազգային և քաղաքական առճակատման խորհրդանիշ, որի միջոցով արտացոլվեցին Վրաստանի հասարակական ուժերի միջև առկա հակասությունները:

Այսպիսով՝ 1917-1919թթ. ընտրական գործընթացները Վրաստանում ներկայացնում են ազգային և սոցիալ-քաղաքական պայքարի բարդ ու բազմաշերտ պատմություն, որտեղ ժողովրդավարության հաստատման փորձերը զուգորդվեցին ազգային հակամարտությունների խորացմամբ:

1919թ. փետրվարի 2-ին Թիֆլիսում տեղի ունեցան քաղաքային խորհրդի ընտրություններ: 72 հազար ցուցակագրված ընտրողներից մասնակցեցին 36 հազարը: Հավլաբարը, ունենալով 50-60 հազար բնակչություն, տվել էր ընդամենը 1,455 ձայն: Ընտրություններում հաղթեց մենշևիկյան կուսակցությունը: Ձայները

բաշխվեցին հետևյալ կերպ (საქართველოს დემოკრატიული რესპუბლიკის. . . **1918-1921, 1990**):

1917 թ. Քաղաքական ուժեր	1917թ. մանդատների թիվը	1919 թ. Քաղաքական ուժեր	1919թ. մանդատների թիվը
Վրաց.սոցիալ-դեմոկրատական կուսակցություն՝ մենշևիկ	50	Վրաց. սոցիալ-դեմոկրատական կուսակցություն՝ մենշևիկ	69
Հայ Հեղափոխական Դաշնակցություն	24	Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական (բոլշևիկյան) կուսակցություն	1
Սոցիալիստական հեղափոխական կուսակցություն	20	Սոցիալիստական հեղափոխական կուսակցություն	7
Կատեդ	6	Ձախ սոցիալիստ-ֆեդերալիստ	1
Հայ Ժողովրդական կուսակցություն	1	Վրաց.ազգային կուսակցություն	1
Բոլշևիկ	7	Թբիլիսիի բնակարանատերերի միությունը	1
Ազգային Դեմոկրատական կուսակցություն	4	Ազգային Դեմոկրատական կուսակցություն	10

Սոցիալիստ-ֆեդերալիստ	4	Վրաստանի Մահմեդականների Ազգային խորհուրդ	0*

Ըստ ազգությունների՝ ձայները բաժանվել են հետևյալ կարգով **(«Հառաջ» 1919, 12 հունվար).**

Ազգություն	1917 թ.	1919 թ.
Վրացիներ	38	78
Հայեր	48	5
Ռուսներ	20	4
Թուրքեր	5	1
Հրեաներ	3	1
Լեհեր	2	-
Գերման	2	1
Ուկրաինացիներ	2	-

Ընտրությունների արդյունքները՝ թիվ 1. Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն՝ 68 իրավասու, որից հայեր էին 3-ը՝ Բագ. Մկրտումյանը, տիկ. Է. Տեր Բարսեղյանը /Մախվիլաձե/, Ա. Բարսեղյանը, թիվ 2.

*Համաձայն 1918թ. դեկտեմբերի 17-ին հաստատված «Քաղաքային խորհուրդների ընտրողների ընտրությունների կանոնակարգ»-ի՝ Թիֆլիսի խորհրդի անդամների թիվը սահմանափկվում էր 90-ով: Առկա աղբյուրներում կան որոշակի տարբերություններ մասնավորապես ՎՄԱԽ-ի խորհրդում մանդատ ունենալու առնչությամբ: Հայկական և վրացական որոշ աղբյուներ նշում են 1 մանդատ, որոշ վրացական աղբյուներ՝ 3: Սակայն հիմք ընդունելով ՎԴՀ-ի իրավական ակտերի ժողովածուն՝ 1918-1921 թթ. և համաձայն կանոնակարգով հաստատված մանդատների թվի, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արժանահավատ է նշված աղբյուրը:

Վրաստանի ազգային դեմոկրատական կուսակցություն 10 իրավասու, թիվ 4. Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն՝ 1 իրավասու՝ Ա. Զոհրաբյանը, թիվ 5. Վրաց սոցիալիստ ֆեդերալիստական կուսակցություն՝ 7 իրավասու, թիվ 7. վրաց ձախ ֆեդերատիվ՝ 1 իրավասու, թիվ 8. վրաց Ազգային կուսակցություն՝ 1, թիվ 9. Թիֆլիսի տնատերերի և սեփականատերերի՝ 1 իրավասու **(«Մշակ» 1919, 9 փետրվար):**

Այսպիսով, տեսնում ենք, որ վրացական քաղաքականությունն այնպիսի ազդեցություն ունեցավ, որ անգամ հայ քաղաքական կուսակցությունները չմասնակցեցին Թիֆլիսի Քաղաքային խորհրդի ընտրություններին: Հակահայկական քաղաքականության արդյունքում հալածանքների էին ենթարկվում հայ մտավորականները և մի շարք քաղաքական գործիչներ: Անգամ պատգամավորական անձեռնմխելիությունը չէր պաշտպանվում. խորհրդարանի անդամ Զ. Զորյանը, Թիֆլիսի քաղաքային դումայի իրավասուներ Ա. Աբեղյանը, Ս. Թոսունյանը, ինչպես նաև Հ. Թումանյանը ենթարկվեցին ձերբակալությունների **(Մաիլյան Բ., 2016):**

Բացի այդ, քաղաքում տարածված տիֆի, ջրծաղիկի և այլ հիվանդությունների համաճարակները ևս պատճառ դարձան, որ շատերը չմասնակցեն ընտրություններին: Ա. Ջամալյանը գրել է. «Ժորդանիայի կառավարութեան օրհնութեամբ վրացիք 1919-ի բռնի եւ արհեստական ընտրութիւններով ասպարէզից քշեցին հայերին եւ «ազգայնացրին» Թիֆլիսի ինքնավարութիւնը, թէեւ նրանք այդ քաղաքի ազգաբնակութեան հազիւ մի քառորդն էին կազմում: Այսօր էլ վրաց բոլշեւիկները արգոսեան աչքերով հետեւում են, որ ոչ մի «աւելորդ» հայ ներս չթափանցի քաղաքային գործերի մէջ» **(Ջամալյան Ա. , 1929):**

1919 թ. փետրվարի 13-ին տեղի ունեցավ Թիֆլիսի նոր քաղաքային խորհրդի առաջին նիստը, որը բացեց նախկին քաղաքագլուխ Ն. Էլիավան: Իր խոսքում Էլիավան շեշտեց, որ հայ ներկայացուցիչները բացակայում են նոր խորհրդից, ինչը պայմանավորված էր հայ կուսակցությունների՝ ընտրություններին

չմասնակցելու որոշմամբ: Չնայած դրան, նա հայտարարեց, որ խտրականություն չի դրվի հայերի և վրացիների միջև **(Մաիլյան Բ., 2016)**:

Նիստի ընթացքում Ա. Զոհրաբյանը բարձրաձայնեց այլազգիների ներկայացուցիչների բացակայության խնդիրը՝ հարցնելով, թե արդյոք Թիֆլիսն այդքան փոխվել է, որ այլևս չի արտացոլում իր բազմազգ բնույթը **(«Մշակ» 1919, 13 փետրվար)**: Հաջորդող ընտրությունների արդյունքում քաղաքագլուխ ընտրվեց Բենիամին Չխիկվիլվիլին, իսկ վարչության 4 անդամներից միայն մեկը՝ ազգությամբ հայ Կոնստանտին Աբգարով Պանիևը, ինչը վկայում էր հայերի քաղաքական դիրքերի էական նվազման մասին: Այս փոփոխությունները ոչ միայն արտացոլվեցին նոր քաղաքային խորհրդի կազմի մեջ, այլև դրսևորվեցին հայ գործիչների նկատմամբ իրականացված իրավական և քաղաքական ճնշումներով **(«Մշակ» 1919, 19 փետրվար)**:

Խորհրդի նիստերի մեծ մասը կրում էր ոչ թե կառավարչական, այլ ներքին քաղաքական բնույթ, ինչը հանգեցնում էր պառակտվածության և լարվածության, որոնք իրենց ազդեցությունն էին թողնում նաև քաղաքի ընդհանուր կառավարման վրա: Տնտեսությունը քայքայված էր, իսկ ինքնավար մարմինների ուշադրության կենտրոնում առավելապես քաղաքական խնդիրներն էին, քան կենսական առաջնահերթությունները **(«Աշխատավոր» 1919, 8 հունիս)**:

Կարող ենք եզրակացնել, որ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունն իր ազգային քաղաքականությամբ պետականաշինության փորձ էր կատարում, սակայն, ունենալով կենտրոնացված պետական քաղաքականություն, հիմնականում անտեսում էր մյուս ազգերի ներկայացուցիչների իրավունքները: Այդպիսի գործողություններից մեկն էլ ՆԳ նախարարության 1919թ. աշնանը ընդունած որոշումն էր, որի համաձայն Թիֆլիսը պետք է «դատարկվեր օտար տարրից» **(Մաիլյան Բ., 2016)**:

Բազմազգ բնակչություն ունեցող Թիֆլիսը, որը երկար ժամանակ հանդես էր գալիս որպես բազմամշակութային քաղաքակրթության կենտրոն, այս որոշման հետևանքով բախվեց լուրջ մարտահրավերների: Այն ոչ միայն խորացրեց

էթնիկական լարվածությունները, այլև նպաստեց պետության ներսում պառակտումների՝ նույնիսկ վրաց շրջանակներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի (1918-1921թթ.) ազգային քաղաքականությունը, որի նպատակն էր ամրապնդել վրացական ինքնությունը, սահմանափակեց հայ համայնքի քաղաքական ներգրավվածությունը Թիֆլիսում: Քաղաքացիության, պետական լեզվի, ընտրական գործընթացների և ինքնակառավարման համակարգում ներկայացվածության սահմանափակումները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ճգնաժամը, նպաստեցին հայերի սոցիալ-քաղաքական դերակատարության նվազմանը:

Այս քաղաքականությունը ոչ միայն թուլացրեց բազմազգ հասարակության համախմբվածությունը, այլև խորացրեց ազգամիջյան լարվածությունը՝ խաթարելով հասարակական ներդաշնակությունն ու բազմազգ Թիֆլիսի կառուցվածքը: Վրաստանի անկախության շրջանի այս իրադարձությունները ցույց են տալիս, որ ազգային քաղաքականության միակողմանի կիրառումը բազմազգ պետությունում կարող է հանգեցնել հասարակության ներքին պառակտման և երկարաժամկետ սոցիալական հետևանքների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Վարդանյան Թ. (2010)**, Վրաստան. Ինքնությունը քաղաքական ծրագրերում և գործողության մեջ, Երևան, «21-րդ Դար», թիվ 3(31), «Նորավանք» հրատ.:
2. **Մաիլյան Բ. (2011)**, Վրաստանի Հանրապետության կազմավորման և ներքին քաղաքականության հիմնական սկզբունքները (1918-1921թթ.), Արևելագիտական ժողովածու, Երևան, թիվ XXVIII, ՀՍՍՌ ԳԱ հրատ:
3. **Ստեփանյան Խ. (2008)**, Վրաստանի հայության ազգային-մշակութային ինքնավարության հարցը 1918-1921թթ., Երևան, Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 1(111):
4. **Մաիլյան Բ. (2016),** Ազգային հարցը և հայերի կացությունը Վրաստանի Հանրապետությունում, Երևան, «Գիտություն» հրատ:
5. **Ջամալեան Ա. (1929)**, Հայ վրաճական կնճիռը, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, թիվ 6 (78):
6. **ხმალაძე ვ. (1997),** ადგილობრივი თვითმმართველობა საქართველო ჟი: წარსული, თანამედროვქობა, ტენდენცია, თბილისი, გამოცემულია გაეროს განვითარების პროგრამის
7. **სტივენ ჯ. (2018),** დემოკრატიის ფორმირება საქართველოში: 1918-1921, https://archive.gov.ge/storage/old_files/doc/3/3965.pdf:
8. საქართველოს დემოკრატიული რესპუბლიკის კონსტიტუცია 1921 წ თავი 10, http://constcentre.gov.ge/failebi/1921_clis_konstitucia_33442.pdf, [Հասանելի է եղել 08.10.2024թ.].
9. საქართველოს დემოკრატიული რესპუბლიკის სამართლებრივი აქტების კრებული. 1918-192 (1990), .თბ.

ՄԱՄՈՒԼ

1. «Հորիզոն» (1917), 8 մարտ, 27 հուլիս:
2. «Մշակ» (1919), 9 փետրվար, 13 փետրվար, 19 փետրվար:

3. «Մշակ» (1918), 4 սեպտեմբեր, 30 հոկտեմբեր, 19 դեկտեմբեր, 22 դեկտեմբեր:
4. «Պայքար» (1918), 7 փետրվար, 17 փետրվար, 14 մարտ:
5. «Աշխատավոր» (1919), 8 նոյեմբեր:
6. «Ժողովրդի ձայն» (1918), 11 հոկտեմբեր:
7. «Հառաջ» (1919), 12 հունվար, 7 փետրվար:

LITERATURE

1. **Vardanyan T. (2010)**, Vrastan. Inqnowt'yowny' qaghaqakan c'ragrerowm & gorc'oghowt'yan mej /Georgia: Identity in Political Programs and Action/, Yerevan, “21st Century”, No. 3(31), “Noravank” Publishing House.
2. **Mailyan B. (2011)**, Vrastani Hanrapetowt'yan kazmavorman & nerqin qaghaqakanowt'yan himnakan skzbownqnery' (1918-1921t't'.) /The main principles of the formation and internal policy of the Republic of Georgia (1918-1921)/, Collection of Oriental Studies, Yerevan, No. XXVIII, ASSR Academy of Sciences.
3. **Stepanyan Kh. (2008),** Vrastani hayowt'yan azgayin-mshakowt'ayin inqnavarowt'yan harcy' 1918-1921t't'. /The issue of national-cultural autonomy of the Armenian community in Georgia from 1918 to 1921/, Yerevan, Banber of the Archives of Armenia.
4. **Mailyan B. (2016),** Azgayin harcy' & hayeri kacowt'yowny' Vrastani Hanrapetowt'yownowm /The National Question and the Situation of Armenians in the Republic of Georgia/, Yerevan, “Science” Publishing House.
5. **Jamalian A. (1929),** Hay vratwakan kntwir'y' /The Armenian-Georgian Wrinkle/, “Hayrenik” Magazine, April, No. 6 (78).
6. **Khmaladze V. (1997),** Adgilobrivi tvitmmartveloba sakartvelo zhi: ts’arsuli, tanamedrovkoba, t’endentsia /Local Self-Government in Georgia: Past, Present, Trends/, Tbilisi, published by the United Nations Development Programme.

7. **Stevens J. (2018),** Demok'rat'iis pormireba sakartveloshi: 1918-1921 /The Formation of Democracy in Georgia: 1918-1921/, Mount Holyoke College (Massachusetts, USA).
8. Sakartvelos demok'rat'iuli resp'ublik'is k'onst'it'utsia 1921 ts' tavi 10/ Constitution of the Democratic Republic of Georgia, 1921, Chapter 10/ (accessed 08.10.2024).
9. Sakartvelos demok'rat'iuli resp'ublik'is samartlebrivi akt'ebis k'rebuli. 1918-1921 / Collection of Legal Acts of the Democratic Republic of Georgia, 1918-1921/, (1990), Tbilisi.

PRESS

1. "Horizon" (1917), March 8, July 27.
2. "Mshak" (1919), February 9, February 13, February 19,
3. "Mshak" (1918), September 4, October 30, December 19, December 22
4. "Paykar" (1918), February 7, February 17, March 14,
5. "Ashkhatavor" (1919), November 8.
6. "Joghovrdi Dzayn" (1918), October 11.
7. "Haratch" (1919), January 12, February 7.

Марине Саградян

Тенденции сокращения участия армян в политической жизни Тифлиса (1918–1921 гг.)

Заключение

Ключевые слова и выражения: *Органы местного самоуправления, армянская община Тбилиси, Городской совет Тбилиси, выборы в Совет, ограничение прав армян.*

В статье рассматривается участие армянской общины Тбилиси в политической жизни Демократической Республики Грузия (1918–1921) и причины снижения её влияния.

Несмотря на установление демократического строя и провозглашение принципа равноправия национальных меньшинств, закрепленного в Декларации независимости, уменьшение политической роли армянской общины было обусловлено как государственной национальной стратегией, так и внутренними и региональными факторами. Исследование показывает, что национальная политика и законодательные меры, принятые грузинскими властями, препятствовали участию армян в системе государственного управления. В частности, гражданские и языковые ограничения способствовали снижению их политического влияния. Национальная стратегия новообразованного государства была направлена на сокращение участия негрузинских общин в государственных и местных структурах.

Анализ выборов в городской совет Тбилиси свидетельствует о том, что, хотя армяне ранее играли значительную роль в процессе местного самоуправления, политические приоритеты новообразованного государства привели к сокращению их влияния.

Исследование основано на анализе законодательных документов, прессы того времени и архивных данных с целью выявить, как формировалась и функционировала грузинская национальная политика. Оно также подчеркивает

попытки армянской общины Тбилиси преодолеть ограничения политической активности, однако внутренние организационные проблемы и внешнеполитические события затрудняли её участие в политической жизни города.

Результаты исследования показывают, что снижение политической активности армянской общины могло быть обусловлено националистическими тенденциями в грузинской политической элите, которые влияли на процесс принятия решений и ограничивали участие армян в государственных и политических процессах, а также внутренними трудностями внутри самой армянской общины.

Marine Sahradyan

Trends in the decline of Armenian participation in the political life of Tiflis (1918–1921)

Conclusion

Key words and expressions: *Local self-government bodies, the Armenian community of Tbilisi, Tbilisi City Council, Council elections, restrictions on Armenian rights.*

The article examines the involvement of the Armenian community of Tbilisi in the political life of the Democratic Republic of Georgia (1918-1921) and the reasons for the decline of this influence.

Despite the establishment of democratic principles and the policy of ensuring legal equality for national minorities, as reflected in the Declaration of Independence, the decline of the political role of the Armenian community was influenced by both the national strategy of the state and internal and regional factors. The study indicates that the national policies and legislative regulations adopted by the Georgian authorities hindered the participation of Armenians in the state administration system. Specifically, civil and linguistic restrictions reduced the political influence of the Armenian community. The newly formed state's national

strategy aimed to limit non-Georgian communities' involvement in state and local governance structures.

The analysis of the Tbilisi City Council elections shows that although Armenians had previously played a significant role in municipal self-governance processes, the priorities of the newly established state reduced their influence.

The study is based on analyzing legislative documents, contemporary press, and certain archival data to reveal how Georgian national policy was shaped and implemented. It also highlights the efforts of the Armenian community of Tbilisi to overcome restrictions on political activity. However, internal organizational challenges and external political developments hindered their participation in the political life of Tbilisi.

The study reveals that the decline in the political activity of the Armenian community may have been linked to nationalist approaches within the political elite of Georgia, which influenced decision-making processes and restricted the Armenian community's involvement in state and political affairs. Additionally, internal issues within the Armenian community also contributed to this decline.

The study indicates that the decline in the Armenian community's political activity may have been linked to nationalist tendencies within Georgia's political elite. These tendencies influenced decision-making processes and limited the Armenian community's participation in state and political affairs. Additionally, internal issues within the Armenian community contributed to this decline.

Մարինե Սահրադյան – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունը՝ հայ-վրացական հարաբերություններ: sahradyan.marine95@gmail.com

Marine Sahradyan – PhD student at the Chair of Armenian History at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Scientific interests

include Armenian-Georgian relations from 1918 to 1921 and the Armenian community in Georgia. Contact number: sahradyan.marine95@gmail.com

Марине Саградян – аспирант кафедры истории Армении Армянский Государственного педагогического университета имени Хачатура Абовяна. Научные интересы: армянско-грузинские отношения в 1918-1921 годах, армянская община в Грузии. sahradyan.marine95@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 10.02.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 02.03.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.